ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀ հատուկ քննչական ծառայության կարիքների համար գնումների Armeps էլեկտրոնային համակարգի միջոցով գրասենյակային և համակարգչային օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ԳՀ-19/03** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 27.06.2019թ. ժամը 12:00-ին, ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչական շենքում, ք.Երևան, Վ.Վաղարշյան 13ա հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հակոբյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ս.Ղազարյանը, Ա.Նախշքարյանը, Ն. Կարապետյանը, Ա.Հովհաննիսյանը, և նիստի քարտուղար՝ Գ.Բաբայանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

**ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ԳՀ-19/03** ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտերը բացվել են Armeps գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետի ավարտից հետո /27.06.19թ. ժամը 11:00 /

Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Մասնակից | ՀՎՀՀ | Էլ.փոստ | Հասցե |
|---|---|---|---|
| <<Ստարտկոպի>>ՍՊԸ | 01262714 | arturik-tom@mail.ru | ԱՋԱՓՆՅԱԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ 2 ՆՐԲ. 3 15 |

2.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ

2.1 Մասնակցի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը/հայտերում առկա փաստաթղթերը / կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

4.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

| | Ապրանքի անվանումը | Նախահաշվային գին | Ստարտկոպի ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ | ընդհանուր գին |
| 1 | բարձր ամրության թելեր | 5500 | | | |
| 2 | սոսինձ, էմուլսիա | 22000 | | | |
| 3 | կնիք, ավտոմատ, կլոր | 6000 | | | |
| 4 | թուղթ գունավոր, A4 ձ—աչափի | 2400 | | | |
| 5 | թղթապանակ, կոշտ կազմով | 7500 | | | |
| 6 | թուղթ, կազմի, ստվարաթղթե | 240000 | | | |
| 7 | հատուկ Ա3 ծրար | 20000 | | | |
| 8 | տոներային քարտրիջներ | 180000 | | | |
| 9 | տոներային քարտրիջներ | 40000 | 54760 | 10952 | 65712 |
| 10 | համակարգիչների պարագաներ | 2000 | 1650 | 330 | 1980 |

**5.Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարած հարցումների մասին**

5.1 Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:

**6. Նիստը կասեցնելու վերաբերյալ**

9-րդ չափաբաժնի համար «Ստարտկոպի» ՍՊԸ–ն ներկայացրել է նախահաշվային գնից բարձր գին, ուստի հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը, և վերոհիշյալ մասնակցին հրավիրել գնի նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների.

Բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան 10-րդ աշխատանքային օրը /սույն թվականի հուլիսի 2-ին, ժամը 12:00-ին ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5,դեմ՝ 0:**

**7.Տվյալներ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ**

Գնի նվազեցման շուրջ բանակցությունները հրավիրվել են սույն թվականի հուլիսի 2-ին, ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա հասցեում.

Հրավիրված մասնակիցը՝ «Ստարտկոպի» ՍՊԸ-ն, չի ներկայացել բանակցության:

**8. Տվյալներ չկայացած չափաբաժինների և զբաղեցրած տեղերի վերաբերյալ**

Այսպիսով, առաջին տեղ զբաղեցրած մասնակից համարել՝

«Ստարտկոպի» ՍՊԸ-ին՝ 10-րդ չափաբաժնով:

Մրցույթի 1-ից 8-րդ չափաբաժինների համար գնային առաջարկներ չեն եղել, իսկ 9-րդ չափաբաժնի համար գնի նվազեցում չի կատարվել, ուստի վերոհիշյալ չափաբաժիններով մրցույթը համարվում է չկայացած:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5,դեմ՝ 0:**

9. Տվյալներ որակավորման չափանիշների վերաբերյալ

Առաջին տեղ զբաղեցրած համարվող մասնակցին ծանուցել՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ հատուկ քննչական ծառայության g.babayan@ccc.am էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնել որակավորման չափանիշներն հիմնավորող փաստաթղթերը.

10. ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ԳՀ-19/03 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ընդունեց որոշում հետևյալի մասին.

ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ԳՀ-19/03 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ք. Երևան Վ. Վաղարշյան 13 ա հասցեում:

Համաձայն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետնանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | ------------------------------ | Վ.Հակոբյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | ------------------------------ | Ս.Ղազարյան |
| | ------------------------------ | Ն.Կարապետյան |
| | ------------------------------ | Ա.Նախշքարյան |
| | ------------------------------ | Ա.Հովհաննիսյան |
| Նիստի քարտուղար՝ | ------------------------------ | Գ.Բաբայան |